

Կայացավ քաղաքացիների հունիս ամսվա ընդունելությունը

13.06.2014

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի մոտ ա/թ հունիսի 13-ին կայացավ քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելության համար ցուցակագրվել էր 63 քաղաքացի, բոլորն էլ եկել էին ընդունելության:

60 քաղաքացիներ դիմել էին ֆինանսական օժանդակության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվեց: Իսկ 3-ը դիմել էին՝ 1-ը՝ բնակարանի ապահովման, 2-ը՝ վթարային շենք-շինությունների վերանորոգման հարցերով: Վերջիններիս խնդրանքը քննարկելու վերաբերյալ հանձնարարություն տրվեց մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ ուսումնասիրել բարձրացված հարցերը և օրենքով նախատեսված ժամկետներում պատասխանել դիմումագիրներին: